

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

**YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)**

№ 13

**YEREVAN
YSU PRESS
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր
(Ուզբեկստան)

Խաչատրյան Ջարուհի¹

ՉԻԱՆՈՒՆՆԵՐԸ ԽԱՂԱՆԻ
ՇԻՐՎԱՆԻՒ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր՝ Խաղանի, ձիանուններ, «ձի» նշանակող նկարագրական ձևեր, պարսկերեն միջնադարյան բառարան, ձիամատյան, փոխառություն

Խաղանի Շիրվանին պարսկալեզու գրականության խոշոր քնարերգուներից է, որը պարսկերեն և արաբերեն հարուստ գրական ժառանգություն է թողել: Նրա ստեղծագործությունների բառապաշարում առկա է կենդանիների անվանումներ ցույց տվող մի շարք բառեր, գեղարվեստական նկարագրություններ, որոնց թվում ուշագրավ են հատկապես ձիանունները կամ «ձի» նշանակող նկարագրական ձևերը: Խաղանին իր ստեղծագործություններում կիրառում է մոտ երկու տասնյակի հասնող ձիանուններ, որոնցից մի քանիսին այժմ կանդրադառնանք այս հոդվածի շրջանակներում:

Arjāl (ارجال)¹. ձի, երիվար, 2. ոտքի վրա սպիտակ նշան ունեցող ձի, 3. ձի, որի առջևի կամ ետևի մեկ ոտքը ամբողջովին սպիտակ է, 4. ձի, որի երեք ոտքերը սպիտակ են, իսկ մեկը՝ ուրիշ գույնի (LD, I, 1411; F'A, 154; FS, I, 113)²: Խաղանին ձիանունը հիշատակում է հետևյալ տողերում. «...*Andar harāmzādegi az*

¹ ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս, էլ. փոստ՝ zara.khachatryan@ysu.am

² DehxodāA., *Loyatnāme-ye Dehxodā*, Tehrān, 1993/94, 14 j. (այսուհետև հոդվածում՝ LD); 'Amīd H., *Farhang-e fārsī*, Tehrān, 1979 (այսուհետև՝ F'A); Anvari H., *Farhang-e fešorde-ye soxan*, Tehrān, 2003, 2 j., (այսուհետև՝ FS).

astarān-e dahr, ān arjal-e dorōšsar-e narmsom to-yi... աշխարհի բոլոր խառնածինների համեմատ, այն խոշոր և փափկասմբակ նժույզը դու ես...» (XD, s.687)³: Բառամիավորը իր վերջին իմաստային նշանակությամբ դասվում է արտաքինհազվադեպ հատկանիշներ ունեցող ձիերի շարքին: Այսպես է կոչվում նաև ձիու «առջևի ու ետևի ոտքերի սպիտակ լինելու» ֆիզիկական առանձնահատկությունը (FM, I, 195)⁴: Եզրը վկայված է պարսից լեզվի միջնադարյան «Yiyās ol-loiyāt» բառարանում (LD, I, 1411), որտեղ «երեք ոտքը սպիտակ, իսկ մեկ ոտքը այլ գույնի ձին» չարաբաստիկ, դժբախտություն բերող է համարվում, ինչը նաև թերություն է ձիերի համար, ինչպես նաև ավելի ուշ շրջանի «*Farhang-e Nafisi*» բառարանում (j. I, 167)⁵: Բառամիավորը հանգում է արաբ. *rjl* «տղամարդու նման վարվել, չափահաս դառնալ, ձիու շտապելը» արմատին⁶: Պարսկերենում նույն արմատից է նաև *rajal* ձիանունը, որը պարսկերենում ունի՝ 1. ձիերի երամակի վրա բաց թողնված ձի, 2. ձիերի երամակի մեջ ազատ արձակած ձի, 3. ուղտի ձազը մոր հետ, որը ցանկացած տեղ ուզում է կաթ ուտել (LD, VII, 10236) իմաստները: Բառանունը ժամանակակից պարսկերենում ունինան «ավագ, ուժեղ մարդ» նշանակություն: Եզրը փոխառություն է արաբերենից:

Bārgir (بارگیر) 1. ձի, երիվար, 2. ոչ ազնվացեղ ձի, գրաստ, 3. ռազմական նպատակներով կիրառվող բեռնակիր ձի, 4. ցանկացած չորքոտանի, որը ծառայում է բեռնափոխադրման, հեծնելու կամ էլ ինչ-որ մեկին փոխ տալու համար (LD, III, 3489; FS, I, 267): Խաղանին հիշատակում է ձիանունը հետևյալ բեյթում. «...*Bār-e 'etāb-e u natavānam kešid az ān ke, mārā sezāye houdaj-e u bārgirnist... ես չեմ կարող այնժամ տանել հանդիմանությունը նրա,*

³ Xāqāni Š., Divān, Tehrān, 1937 (այսուհետև՝ XD).

⁴ Mo`in M., Farhang-e fārsi, Tehrān, 1977, 4 j. (այսուհետև՝ FM).

⁵ Nafisi 'A., Farhang-e Nafisi, Tehrān, 1976, 5 j. (այսուհետև՝ FN).

⁶ Баранов Х., Арабско - русский словарь, Москва, 1989, т. 1, ст. 289.

քանզի չկա նրա գահավորակին արժանի մի բեռնակիր ձի... (XD, s. 6): Եզրը պարսկերենում ունի նաև «մատակ» և «յուրաքայուր կենդանու էգ» նշանակությունը (LD, III,3489): Բառամիավորը նաև «ուղտ» նշանակությամբ է վկայված XVIIդ. պարսից լեզվի միջնադարյան «*Borhan-e Qat'e*» բառարանում (j. I, s. 216)⁷: Եզրը բազմիցս կիրառվել է պարսից դասական գրականության մեջ:

Բառանունը բարդություն է կազմված՝ *bār* «բեռ», որը ծագումնաբանորեն հանգում է հին իրանական **bāra*- «բեռ», հմմտ. սողդ. *β'r* «բեռ», սաք. *bāra*⁸, օս. *warg* «բեռ»⁹, *bar-* «տանել, կրել» արմատինև *-gīr* <*gereftan* «վերցնել»<*gaub*-բայի¹⁰ ներկայի հիմքով կազմված ձևին, այսինքն՝ «բեռնակիր», որն էլ համապատասխանում է կենդանու կատարած գործառնություն: Բառամիավորը իրանական փոխառություն է նաև թուրքերենում *beygir* «լծկան ձի», տնտեսության մեջ օգտագործվող ձի՝ *araba beygiri* «սայլին լծվող ձի», *dermen beygiri* «ջրաղացի ձի», աղյրբ. *Baygar* «լծկան ձի», իսկ բրբռ. «ձի, զամբիկ» նշանակությամբ¹¹:

Bur (𐭠𐭣) կարմրաշիկավուն, բոսորագույն ձի (LD, III, 4397; FM, I, 601): Բառամիավորը որը ձիու նշանակությամբ հանդիպում է Խաղանիի հետևյալ ստղերում. «...*Az bu-ye mošk-e tebet kân sahn-e seydgah rāst, āyešte bud bā xāk az nāl- e bur o čālaš... նրաստեղի ձիու բույրն էր, որ խառնվել էր հրակարմիր նժույգների վարզից ելած փռնուն...*» (XD, s. 232): Բառամիավորը կիրառվում է շագանակագույն, հրակարմիր թույր ունեցող կենդանիների համար: Եզրը

⁷ Xalaf-eTabrizi M., Borhān-e Qāte', Farhang-e fārsi, Tehrān, 1997,4 j.(այսուհետև՝ BQ).

⁸ Bailey H., Dictionary of Khotan Saka, London, 1979, p. 278.

⁹ Абаев В. И., Историко-этимологический словарь осетинского языка, Ленинград, т. 4, с. 49.

¹⁰ Hasandus M., Farhang-e rišesenāxti-e zabān-e fārsi, Tehrān, 2014, j. 1, 359; j. 4, 2379.

¹¹ Щербак А., Названия домашних и диких животных в тюрских языках, Историческое развитие лексики тюрских языков, Москва, 1961, ст.84; տե՛ս նաև Щербак А., Сравнительная фонетика тюрских языков, Ленинград, 1970, ст.158.

ձիանվան նշանակությամբ վկայված է պարսից լեզվի միջնադարյան բառարաններում (BQ,I, 314, FJ,II, 1931), իսկ *bovr* տարբերակով հանդիպում է «*Farhang-e Nafisi*» բառարանում (I, 657): Բառամիավորը որպես սկյութական անձնանուն հիշատակվում է հունական աղբյուրներում՝ *Βορασπος* (*bor-asp*) «հրակարմիր ձիեր ունեցող»¹²:

Բառամիավորը հանգում է հին իր. **bavra-* նախաձևին¹³, որն է «մուգ շագանակագույն, փայլուն դեղնակարմիր»: Այն միջ.պ. ունեցել է *bwl* [*bōr*] «կարմրաշագանակագույն, նաև շառատագույն նժույգ»¹⁴, հմմտ. սողդ. *βwr* «կարմիր, կարմրաշիկավուն», դաս. պ. *bōr*, դարի *būr* ձևերը, իսկ ժամանակակից իրանական լեզուներից ժ. պարսկ. *bur*, քրդ. (կուրմ., սոր.) *bor*՝ «շագանակագույն, նաև մոխրագույն» *bōr*, *bōra*՝ «շիկակարմիր ձի», օս. (իրոն.) *būr*, (դիզոր.) *bor* «դեղին», յդբ. *vur*, պամ. մունջ. *vūr*՝ «բաց կարմիր երանգ» (թույր խոշոր եղջերավոր կենդանիների համար): Վախաներենում հանդիպում է *buryó*, *buryoyí* ձևերը՝ «դեղնավուն մուգ պուտերով ձիու գույնը»¹⁵: Վերջինս փոխառություն է սաջիկերենից՝ *buryo*, *buryoyí*¹⁶ «ծղոտից հյուսած խսիրի գույնը», հմմտ. աֆղ. *burīya* «ծղոտից հյուսած խսիր», պրս. *burīyā* «ծղոտի տեսակ կարպետ, խսիր գործելու համար, նաև՝ ծղոտից հյուսած խսիր՝ բրդյա գորգի տակ զցելու համար»: Բելուջերենում *bor* են անվանում «բաց շագանակագույն երանգով մատակին», ինչպես նաև «կարմրաթույր ձիուն», իսկ Դավանի բարբառում *bu:r*

¹² АбаевВ. И., Историко-этимологический словарь осетинского языка, Ленинград, т. 1,ст.271.

¹³ Hasandust M., նույն տեղում, Tehrān, 2014, j. I, s. 527.

¹⁴ MacKenzie D.N., A Concise Pahlavi Dictionary, Oxford, 1971, p.19.

¹⁵ Стеблин-Каменский И.М., Этимологический словарь ваханского языка, Санкт-Петербург, 1999,ст. 104.

¹⁶ Фарханги забони точикӣ, Москва, 1969, j. 1, s. 219.

բառամիավորը իմաստային փոփոխության է ենթարկվել՝ նշանակելով «դեղնասպիտակավուն բուրդ ունեցող ոչխար»¹⁷:

Բառանունը պարսկերենում կազմում է նաև հետևյալ ձևանունները՝ *bur abraš* «սպիտակ ու կարմիր պուտերով ձի, նաև սպիտակ պուտերով մուգ կարմիր ձի» (LD, III, 4399; F^cA, 326) և *bursār* «կարմրաթույր ձի» (LD, III, 4399; FM, II, 601) ձևանունները: Վերջինս հիշատակվում է նաև Օ. Խայյամի «Նովրուզնամե»-ում¹⁸: Անհրաժեշտ է նշել, որ պարսկերենում շատ է հանդիպում ձիանուններն ըստ ձիու համապատասխան թույրի: Առանձին եզրերով տարբերակվում են անգամ թույրի ամենանուրբ երանգները: Կան նաև ձիանուններ, որոնք տարբերակում են ձիերին ըստ մարմնի տարբեր մասերի գույների: Բառամիավորը պարսկերենում նաև կարմրաշիկավուն, բաց շագանակագույնի և դեղինի միջև տատանվող երանգն է, որից էլ ժամանակակից պարսկերենում ունենք նաև *būr šodan* «կարմրել, շիկնել, ամաչել» հարադիր բայը: Ենթադրվում է, որ բառամիավորը իրանականից թափանցելով թյուրքական լեզուներ, անցել է սլավոնականներին որպես գունանուն՝ ռուս. *бурый* «գորշ, կարմրաշիկավուն», լեհ. *bury*, ուկր. *бурый* «մուգ մոխրագույն»¹⁹:

Takāvar (تکاور) 1. արագավազ, շորավարգ ձի, 2. Ազնվացեղ ձի, 3. արագավազ ուղտ (LD, IV, 6043; F^cA, 357; FM, I, 1124): Խաղանին ձիանունը հիշատակում է հետևյալ բեյթում. «...*Ba moukabaš āb-e šur-e darya, mānd 'araq-e takāvarān rā... աղի ծովերն էլ անցանք, որից միայն արագավազ ձիերի քրտինքը մնաց...*» (XD, s. 34): Բառամիավորը միջնադարյան հուշարձաններում հիշատակվում է ընդհանրապես «արագավազ կենդանի, մասնավորապես ձի և

¹⁷ Salāmi 'A., Guyeš-e davāni, Tehrān, 2002, s. 136.

¹⁸ Xayyām O., Nouruznāme, Tehrān, 1933, s. 51.

¹⁹ Фасмер М., Этимологический словарь русского языка, Москва, 1986, т. 1, ст. 249.

ուղտ» (BQ, I, 504), ինչպես նաև միայն շորավարգ ձի (FN, II, 943) նշանակությամբ:

Բառամիավորը բարդություն է՝ կազմված ժ.պ. *tak/tag* «վազք, վազել» <հ.իր. **tāka-tak-* «վազել, ասպատակել» արմատին և *āvardan/āvar* «բերել» բայի ներկայի հիմքից՝ «վազք բերող, վազեցնող», որն էլ համապատասխանում է ձիու արագ վազելու հատկանիշին: Նույն իմաստն ունի նաև *tagāvar* (LD, IV, 6065) եզրը: Ե՛վ պարսից լեզվի միջնադարյան հուշարձաններում և՛ ավելի ուշ շրջանի հիշատակումներում, ձիանունը սեռի տարբերակման նշանակություն չունի: Եզրը իրանական փոխառություն է թուրքերենում, հմմտ. *tekaver*, օսմ. *esb-i tekâver* 1. մրցավազքի ձի, 2. հեծյալին չցնցող²⁰:

Ārgām/ārgāme (چارگامه / چارگامه) 1. սիգաճեմ ձի, 2. արագընթաց, վարգուն ձի, 3. թեթև և համաչափ քայլքով ընթացող ձի (LD, V, 7012, 7346; FM, I, 1324): Բառամիավորը բառացի նշանակում է «քառաքայլ, քառապայտ»: Այսպես են անվանում այն ձիերին, որոնք ընթանում են երկտակտանի անկյունագծային շարժումով, երբ մեկ ակնթարթում ձիու չորս ոտքերը կտրվում են գետնից²¹, ինչպես նաև ձիու արագ վազքի այն տեսակը, երբ ձին միաժամանակ բարձրացնում է առջևի աջակողմյան ոտքի հետ նաև ետևի ձախակողմյանը, և ընդհակառակը²², հմմտ. հյ. «քառատրոփ»: Ձիանունը հիշատակվում է Խաղանիի հետևյալ տողերում. «...*Sāqia asb-e ārgāme berān, tā rekāb-e segāne besetānim...* Ո՛վ մատուկակ, քշիր այն քառապայտ նժույզն այս կողմ, որ նրա եռաթև ասպանդակին ոտք դնենք...» (XD, s. 34): Բառամիավորը միջնադարյան բառարաններում նույնպես հիշատակվում է (BQ, II, s.611), իսկ «*Farhang-e Jahangiri*» բառարա-

²⁰Կարապետեան Պ. Չ., Մեծ բառարան օսմաներենի հայերեն, Կ. Պոլիս, 1912, էջ՝ 237:

²¹Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հ. 2, էջ՝ 1556:

²²Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. 4, էջ՝ 556:

նում իմաստային առումով նույնացվում *čabokī* (I, s. 282) ձևանվան հետ, որը Խաղանիի ստեղծագործություններում չի հանդիպում:

Չիանունն ունի նկարագրական կազմություն կազմված *čār/čahār «չորս»* <հ. պրս. *čaθvārah, միջ. պրսկ. čahār²³ *čaθvar- «չորս» և *gām/gāme* «քայլ, քայլ զցել» բաղադրիչներից, այսինքն՝ «քառաքայլ», որը համապատասխանում է ձիու վերոնշյալ քայլքի ձևին: Հարկ է նշել, որ «քառաքյաց, քառոտանի» բառամիավորը 1837թ. հայերեն-իտալերեն բառարանում ևս ունի «ձիու, երիվարի» նշանակություն²⁴:

Čāl (چال) 1. ձի, 2. կարմիր և սպիտակ խառը մազերով ձի, 3. չալ ձի, կարմրաշիկավուն սպիտակ խայտերով ձի (LD, V, 7031; FM, I, 1268): Խաղանին *čāl* և *bur* ձիանունները հիշատակում է որպես հոմանիշ բառեր՝ «կարմրաթույր ձիեր» (XD, s. 232) նշանակությամբ: Եզրը *«Farhang-e Jahangiri»* բառարանում (I, 286) հանդիպում է նաև *čāle* տարբերակով: Բառամիավորը պարսկերենում «մտրուկ և ուղտի ձագ» իմաստները ևս ունի (BQ, I, 613)²⁵:

Չիանունը նույն նշանակությամբ վկայված է նաև XIII դարի «Բժշկարան ձիոյ և գրաստնոյ» հանրահայտ ձիամատյանում. «Եւ կան ձիանն չալ ձի, որ լինի իր ամեն մարմինն սպիտակ ու գլուխն ու շլինքն այլ գոյն»²⁶: Հարկ է նշել, որ հայերենում բառամիավորը ևս հանդիպում է «մորթի կամ փետուրների միապաղաղ գույնի վրա

²³Hasandust M., նույն տեղում, j. II, s. 1065.

²⁴Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Մանուէլ վարդապետի Ջախջախեան, ի Վենետիկ, ՌՄՁՁ, էջ՝ 1469:

²⁵Xodāparasti F., *Farhang-e jāmeʿ, vājegān-e motarādef va motazād-e zabān-e fārsi*, Širāz, 1997, s. 461.

²⁶Բժշկարան ձիոյ և առասարակ գրաստնոյ (ԺԳ), Երևան, 1980, էջ՝ 57:

տեղ-տեղ այլ գույնի պուտեր կամ բծեր ունեցող, խատուտիկ»²⁷ իմաստային նշանակությամբ, հմտտ. չալ ձի, չալ օձ, չալ հավ:

Բառամիավորը օսմաներենում ունի «1. մոխրագույն, 2. սև ու սպիտակ խառը մագեր, 3. թույր ձիու համար 4. փոքր ուղտ, 5. թթվաշ համով ուղտի կաթ», իմաստները²⁸, իսկ տաճկերեն-հայերեն բառարանում՝ «գորշախառն»²⁹: Այն թյուրքական լեզուներից անցել էլավոնական լեզուներին՝ ռուս. *чалый* «մոխրագույն, մոխրագույն երանգով», ուկր. *чалий* «շագանակամոխրագույն», նույն իմաստով նաև հ. ռուս. *чалъ*³⁰: Եզրը փոխառություն է թուրքերենից³¹:

Zarde/zardah (زرد) 1. դեղնաթույր ձի, 2. դեղնաթույր ձի, որի բաշի, պոչի, ազդրերի, աչքերի և շրթունքի վրա սև նշան կա (LD, VIII, 11297, FM, II, 1733; BQ, II, 1013; FJ, I, 998): Զիանունը հիշատակվում է Խաղանիի հետևյալ տողերում. «...*Az pošt-e siyāh zin foru kard, bar zarde-ye gāmrān bar afkand...*, *us ʾiθnujqqiθeʒpʰig ʾəwāfniθeʒteʒg ʾi ʾiθeʒniθuʾiθ ʾiθniθawʾiq ʾiθni θawāfteʒ...*» (XD, s. 498):

Բառամիավորը հանգում է հին իրանական **zarta*³² > միջ. պրսկ. *zart*³³ *zar-* «փայլել, լուսարձակել, ճառագայթել» արմատին, հմտտ. ավեստ. *zarui-* «դեղին, դեղինին հարող, ոսկեգույն», սողդ. *zyrtyh*, օս. (դիգ.) *zældæ* «կանաչ, մարգագետին» (< **zarita-*), իրոն. *zærdaw*³⁴, փաշթ. *zyar* «դեղին»³⁵, բելուջ. *zard*³⁶: Զիանունը հիշատակ-

²⁷ Մալխասեանց Ս., նույն տեղում, հ. 4, էջ՝ 8:

²⁸ Clauson G., An Etymological Dictionary of Pre-Thirteenth Century Turkish, At the clarendon press, Oxford, 1972, p. 417; տե՛ս նաև Древнетюрский словарь, Ленинград, 1969, ст. 137.

²⁹ Արիկեան Ս., Ընդարձակ բառարան տաճկերեն հայերեն, Կ. Պոլիս, 1892, էջ՝ 200:

³⁰ Фасмер М., Этимологический словарь русского языка, Москва, 1987, т. 4, ст. 313.

³¹ Радлов В., Опыт словарю тюркских наречий, СПб, 1905, т. 3, ст. 1873-1874.

³² Horn P., Grundriss der neupersischen Etymologie, Strassburg, K. J., Trübner, 1893, p. 146.

³³ Nyberg H. S., նույն տեղում, էջ՝ 230.

³⁴ Абаев В. И., նույն տեղում, т. 4, ст. 295.

³⁵ Hasandust M., նույն տեղում, j. 3, s. 1551.

³⁶ Ganj S., Loyatnāme-ye baluči, Tehrān, 2012, s. 492.

վում է նաև «Նովրուզնամե»-ում³⁷ և ՕնսորԱլ-Մաալի Քեյ Քավուսի «Ղարուսնամե»-ում³⁸:

Ձիանունը վկայված է նաև XIII դարի ձիամատյանում. «*Եւ կա ձի ի բաց դեղին, որ կոչէ իր անունն պարսիկ զանուս*»³⁹: Անհրաժեշտ է նշել, որ հայերենումունենք «զարտակ»՝ «դեղնագույն» նշանակությամբ բառը, որը գործածված է Յայտնության հին թարգմանության մեջ. «Ահա ձի զարտակ»⁴⁰ և հանդիպում է Խորենացու «Աշխարհացոյցում»՝ «զերդակ ձիով»⁴¹: Պարսկերենից է փոխառնված նաև վրացերենի *զերդագի* «դեղնաշորթ ձի» բառամիավորը⁴²: Խաղանիի ստեղծագործություններում հանդիպում է նաև *zardebas*՝ «դեղնաբաշ» ձի նշանակող եզրը (XD, s. 470): Պարսկերենում «դեղնաթույր ձիու» նշանակությամբ է հանդես գալիս նաև *saman*՝ բառամիավորը (LD, VIII, 12134; FA, 758; FM, II, 1921), որը նույնպես վկայված է Խաղանիի ստեղծագործություններում (XD, s. 302): Գունանվան հետ է կապված ուշագրավ է նշել նաև *zardālu* «ծիրան» բառամիավորը, որը նույն նշանակությամբ օսմաներենից՝ *zārdaly* «դառը կորիզով ծիրան»⁴³ անցել է սլավոնական լեզուներին՝ ռուս. *жердела*, ուկր. *Жердѣла* «ծիրանի մանր տեսակ, վայրի ծիրանի տեսակ»⁴⁴:

Խաղանիի ստեղծագործություններում վկայված են նաև *asqar* (*اشقر*), *adham* (*ادهم*), *bāre* (*بارہ*), *xeng* (*خنگ*), *tāzi* (*تازی*), *rahnavard*

³⁷ Xayyām O., նույն տեղում, էջ՝ 51.

³⁸ Keykavus Onsor al-ma’ali, Qābus nāme, Tehrān, 1956, s. 106.

³⁹ Բժշկարան ձիոյ և առասարակ գրասանոյ, էջ՝ 56:

⁴⁰ Աճառյան Հ., Հայերենի արմատական բառարան, Երևան, 1973, հ. 2, էջ՝ 84:

⁴¹ Մովսէսի Խորենացիոյ, Աշխարհացոյց, Վենետիկ, 1881, էջ՝ 46:

⁴² Աճառյան Հ., նույն տեղում, հ. 2, էջ՝ 84:

⁴³ Կարապետեան Պ. Չ., նույն տեղում, էջ՝ 400:

⁴⁴ Фасмер М., նույն տեղում, т. 2, ст. 47.

(رهورد), *raxš* (رخش), *tousan* (توسن), *kavdan* (کودن), *yekrān* (يكران)
)ձիանունները, որոնց մեծ մասը բուն իրանական ծագում ունեն:

Այսպիսով, Խաղանին ստեղծագործելով և՛ պարսկերեն և՛ արաբերեն, նրա ստեղծագործություններում շատ քիչ են արաբական ծագման ձիանունները, իսկ թյուրքական ծագման միայն մեկ ձիանուն է հանդիպում, մինչդեռ նրա ստեղծագործություններում պատահող մնացած բոլոր ձիանունները բուն իրանական ծագում ունեն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ավեստ. - Ավեստայի լեզու

բելուջ.- բելուջերեն

դաս. պ. – դասական պարսկերեն

ժ. պարս. – ժամանակ. պարսկերեն

լեհ. - լեհերեն

հ. պրս. – հին պարսկերեն

հ. ռուս. – հին ռուսերեն

հին. իր. – հին իրանական

միջ. պրս. – միջին պարսկերեն

յղնբ. -յաղնուբերեն

ն. պրս. – նոր պարսկերեն

ուկր. -ուկրաիներեն

պամ. մունջ. – մունջաներեն

ռուս. - ռուսերեն

սակ. - սակերեն

սողդ. - սողդերեն

փշտ. - փաշտո

քրդ. (կուրմ., սոր.) – քրդերեն (կուրմանջի,սորանի)

օս. (իրոն., դիզոյ.) – օսերեն (իրոնյան, դիզոյան)

НАИМЕНОВАНИЕ ЛОШАДЕЙ В ПОЭЗИИ ХАГАНИ ШИРВАНИ

(Резюме)

Хачатрян Заруи

Хагани Ширвани один из крупнейших лириков персидской литературы, который оставил богатое литературное наследие на персидском и арабском языках. В лексике его произведений присутствуют ряд слов указывающих названия животных, художественные описания, в числе которых особо примечательны названия лошадей или описательные формы обозначающие “лошадь”. В произведениях Хагани указаны около двух десятков названий лошадей. В рамках этой статьи обсуждаются несколько названий лошадей (*arjal, bārgir, badrām, bur, takāvar, čārgām/čārgāme, čāl, zarde/zardah*), подвергающихся словообразовательному и этимологическому анализу.

THE HORSE NAMES IN KHĀQĀNI'S POETRY

(Summary)

Khachatryan Zaruhi

Khāqāni is one of the most prominent Persian lyric poets who has left a rich literary heritage in the Persian and Arabic languages. In the lexicon of his works there are a number of words indicating the names of animals, as well as artistic descriptions, among which the horse names or the descriptive forms indicating the horses are especially remarkable. In the works of Khāqāni about 20 names of horses can be found. In this article some of the horse names (*arjal, bārgir, badrām, bur, takāvar, čārgām/čārgāme, čāl, zarde/zardah*) which are found in Khāqāni's poetry are discussed from the morphological and etymological perspectives.